

1178



1930

НАРКОМПРОС АССР

ИНСТИТУТ ПОВЫШЕНИЯ КВАЛИФИКАЦИИ ПЕДАГОГОВ
ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԿՎՈՐՈՒՄԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԻՆՍԻՏՈՒՏ


ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆՄԵՐ

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ № 4

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐԻՆԱՉԱ- ՓՈՒԹՅՈՒՆ

Տվյալ առաջադրության նպատակն են
Առաջարության բանութայի մանկան հասակի զիմափոր
բովանդակու- շրջանների հետ և ցույց տալ այն որենք-
թյունը, վորոնց հետեւմ են մանկան՝ ինչ-
պես զարգացումն ամբողջապես, նույնպես
և նրա առանձին որգանների և ֆունկցիաների զարգացումը:
Կուրսանտը պետք է լավ յուրացնի «զարգացման աղեղի»
(кривая развития) զաղափարը և սովորի նրան գծագրելը:
Կենդանական յուրաքանչյուր տեսակ
Կյանքի անման ունի կյանքի վորոշ՝ տևողություն և արդ
շրջանները. ժամանակի ընթացքում որգանիզմը կա-
տարում է զարգացման վորոշ ցիկլ. հա-
ջորդաբար անցնում է զարգացման վորոշ շրջաններ, վորոնք կոչ-
վում են տարիքային հասակներ:

Մարդն արգանդային զարգացման ընթացքից հետո (40 շա-
րաթ) ծնվում ե. այսինքն՝ թևակիսում ե արտարգանգային ինք-
նուրույն գոյություն, վորից հետո ապրում ե հասակի առաջին
շրջանը, (մերիտասարդություն), յերբ որգանիզմն աճում է, մե-
ծանում է կատարելագործվում և ֆիզիքապես ու հո-

Ա. Խաչատրյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱռավագանքի պահպանական հիմնարար (ա-
սիմիլյացիա) պարունակեր քայլքայիչ (диссимиляция) պրոցեսների
վերաբերմամբ:

Ա. Խաչատրյան

Յերկրորդ՝ աճման ավարտած շրջան (период зрелости—միջն հասակ), յերբ որդանիզմը, համնելով կատարյալ զարգացման, գտնվում է հավասարակշռության մեջ և տարբերվում է մարմնի ավելի դիմացկանությամբ, կարողությամբ և տոկունությամբ, նույնպես և կամքի ու մտքի առավել ուժեղությամբ։ Այդ շրջանում ստեղծական պրոցեսները հավասար են քայլքայիչ պրոցեսներին։

Յերրորդ՝ թառամելու շրջան (ծերություն), յերբ քայլքայման պրոցեսները գերակշռող են համդիմանում և յերբ վրա յեն հասնում ուժերի աստիճանական թուլացումն ու հոգեկան դործունեյության նվազումը։

Այդ մեծ շրջաններից յուրաքանչյուրն իր հերթին ստորաբաժանվում է ավելի մասն շրջանների։

Մանկաբանությունն իր բովանդակությամբ հասակների ուսուման մի բաժին է։ Նա ընդգրկում է մարդու կյանքի առաջին շրջանը։ Ան մը («գիտություն մանկան մասին», «մանկագիտություն») լրությամբ չի համապատասխանում իր բովանդակությանն այնքան, վորքան վերջինն ավելի ընդգրածակ է, մանկաբանությունն ուսումնասիրում և աճող մարդուն՝ մինչև նրա կատարյալ հասակի վրա համնելը։

Թե յերբ և վերջանում զարգացումը և յերբ և սկսվում լիակատար հասունությունը, այդ հարցն ընդհանուր և միատեսակ կերպով չի կարելի սահմանել, վորովհետեւ աճման, հասունության և ծերության շրջանների տևողությունները կախված են յերկրի կլիմայից, սեռից, ժառանգականությունից և ապրելակերպից։ Վոմանք շուտ են հասունանում, ուրիշները՝ ուշ։ (որինակ՝ աղջիկները աղջաներից շուտ են հասունանում), վոմանք շուտ են ծերանում, ուրիշներն իրանց մտավոր և ֆիզիքական ուժերն ավելի յերկար են պահպանում։

Կյանքի տևողության և զարգացման ժամանակաշրջանների անհատական տատանումները՝ բավական նշանակալից են։ Բացի դրանից, մարդկային որդանիզմի մի քայլք գործառնություններ հասունանում են ավելի արագ, քան մյուսները։ և հավասար չափով մի շարք գործառնություններ թողնում են ավելի շուտ։

Հնում կարծում ենին, վոր մարդը համսում է իր ուժերի կատարյալ հասունության 40 տարեկան հասակում։

Ժամանակակից գիտնականներն այդ մամենուը վորոշում են 21—28 տարիներով։ Կիրկապարիկն ասում է, վոր մարդը ֆիզիքական կազմակերպում է մինչ 25 տարեկան հասակը, բայց նրա հոգեկան կազմակերպումը լրանում է մինչև 35 տարին։

Զարգացման շրջանները

Դեռ հնում մենք գտնում ենք մարդու կյանքը շրջանների բաժանելու փորձեր։ Հին հունական ուսումնական մարդկային կյանքի «յոթնյակի» մասին, մարդու կյանքի նորմալ տևողությունը վորոշում եր 70 տարեկան հասակը և այդ բաժանում եր 10 շրջանների, 7-ական տարիներով, ըստ վորոշման շրջանը կազմում եր առաջին յերեք «յոթնյակը»։

1) Վաղաժամ մանկության շրջան՝ առաջին 7 տարին (մինչև առամուների փոխելը)։

2) Մանկական շրջան։—յերկրորդ յոթնյակը (մինչև սեռական հասունության յերեան գալը)։

3) Պատանեկական շրջան։—յերրորդ յոթնյակը (մինչև տղաների կզակի վրա մազերի փնջի յերեան գալը)։ Մի խոսքով այդ բաժանումը շշմարտությունից հեռու չե (ինարկե, հաշվի առնելով այն անխուսափելի տատանումները այս կամ այն կողմը՝ կախված ժառանգականությունից; սեռից, ազգությունից, կլիմայից և կյանքի պայմաններից։ Յեւ իսկապես՝ ներքին արտաթորման գեղձերի մասին յեղած ուսումնասիրությունից մենք տեսնում ենք, վոր ներքին արտաթորման ապարատի գործունեյության փոփոխությունը զուգագիպում ե այն տարիներին, յերբ զարգացման մի շրջանը հաջորդում է մյուսին։ Հետեւելով գիտեկատիկական մեթոդին և ընդունելով զարգացման թոփչքակերպ սկզբունքը, մենք պետք ե յոթերորդ և տասնչորսերորդ (աղջիկների համար տասներեքերորդ) տարիներն ընդունենք վորպես զարգացման շրջման կետեր։

7-րդ տարին առաջին անցման հասակն է, յերբ կաթնատամները փոխարինվում են մնալուն ատամներով և յերբ անհատի հոգեկան ձևակորման մեջ տեղի յեն ունենում այն փոփոխությունները, վորոնց շնորհիվ յերեխան թեւակոխում ե դպրոցական հասակը։ Դրա հետ միասին որգանիզմի վերակառուցման այդ տարին հանդիսանում է որգանիզմի ժամանակավոր բարձր հողնածության, նվազ ընդգիրմադրության, կենսական յեռանդի, ֆիզիքական ու նյարդային ուժերի թուլացման ժամանակամիջոց։ 14-րդ (աղջիկների համար 13-րդ) տարին յերկրորդ անցման հասակն է, յերբ սկսվում է սեռական հասունությունը և յերբ տեղի յեն ունենում ինչպես ֆիզիքական, նույնպես և հոգեկան խորը փոփոխություններ յերեխայի ամբողջ եյության մեջ։

Որգանիզմի նոր վերակառուցման այդ տարին նույնպես որգանիզմի թույլ ընդգիրմադրության, նրա նվազած կենսունակու-

թյան վտանգավոր շրջանն է, վորովհետև որդանիզմի ուժերը կործադրվում են նրա ներքին վերափոխման աշխատանքների համար:

Արգանգային վիճակից արտարգանգային վիճակին անցնելը, ապա 7-րդ և 14-րդ տարիները, սրանք բոլորը «թոիչքներ» են, կրիտիկական մոմենտներ, յերբ քանակը վերածվում է վորակվ, յերբ աճող մարդը թեակոխում և վորակապես նոր զարգացման շրջան:

Վերջին ժամանակներս շատ փորձեր Անման ընթացքի են արվել մարդու աճման ընթացքն ավլսավոր բաժանումները. ըստ վորում հիմնավորման մոտեցումները յեղել են շատ տարբեր:

Շտրատցն իր բաժանումը հիմնավորում է սեռական զարգացման տվյալներով և որդանիզմի աճման ու քաշի մասին իր հայտնաբերած չափով: (Այն փաստով, վոր աճող որդանիզմը հաջորդաբար աճում է կամ յերկարությամբ և ձգվում է կամ ավելի մեծանում է ծավալով ու լլոր ձև ստանում): Շտրատցն աճման ժամանակաշրջանն ամենից առաջ բաժանում է 1) անսեռ (չեղոք) մանկության՝ մինչև 7 տարեկան հասակը 2) յերկսեռ մանկություն (8—15 տարեկան հասակը) 3) սեռական հասունության շրջան (16—30 տարեկան հասակը):

Հետո առաջին յերկու շրջաններից յուրաքանչյուրը ստորաբաժանվում է դարձյալ յերկու մասի. — առաջին շրջան՝ յերբ որդանիզմը կլորանում է, իր ծավալով և ընդարձակվում և յերկրորդ՝ յերբ նա յերկարածգլում է: Այդպիսով նրա բաժանումները ստանում են հետեւյալ կերպարանքը. —

- 1) Կլորաձև ծավալման առաջին շրջան 0—4 տարին.
- 2) Յերկարածգման առաջին շրջան 5—7 տարին.
- 3) Կլորաձև ծավալման յերկրորդ շրջան 8—10 տար.
- 4) Յերկարածգման յերկրորդ շրջան 11—16 տ.
- 5) Կլորաձև ծավալման յերբորդ շրջան 16—30 տ.

Լանգտեյնը, վորպես բաժանման նշան, յենթադրում է ատամները՝ այսպես—

1) Վաղաժամ մանկություն (անատամ մանկություն) 0—1 տարին.

- 2) Կաթնատամների շրջան 2—7 տ.

3) Մնայուն ատամների շրջան 7—20 տ.

Շտիբնը բաժանման հիմքում դնում էր ակտիվության գերազագույն ձևերի հաջորդականությունը. —

1) Վաղաժամ մանկություն (խաղերի շրջան, մինչև 7 տարեկան հասակը).

2) Դպրոցական հասակ (7—14 տար. հասակ) զիտակցական ուսման շրջան, խաղի և աշխատանքի զանազանավորումով (dioph-ֆերենցիայի).

3) Պատանեկության հասունության շրջան (14—20 տ. հասակը), յերբ զարգանում է անհատի ինքնազործունեյությունը:

Շտումպֆն առանձնապես շեշտում է խոսքը և կտարում է հետեւյալ բաժանումները. —

1) Անլեզու շրջան,

2) Խոսել սկսելուց մինչև դպրոց մանելը,

3) Դպրոցական հասակից մինչև սեռական հասունությունը,

4) Սեռական հասունության տարիներ:

Ա. Պինկելիչը մոտենում է զարգացման այս կամ այն շրջանի համար պիտանի դաստիարակչական պրիոմների տարբերության տեսակետից և տալիս է հետեւյալ դասավորությունը. —

1) Մանկություն (մլադенչество) 0—1 տ.

2) Մինչ մանկապարտիզային (մառլային հասակ)-1—3 տ.

3) Մինչ դպրոցական հասակ-3—8 տ.

4) Ցերկրորդ մանկություն (10-ի դպրոց) 8—12 տ.

5) Սեռական հասունության շրջան (110 դպրոց) 12—17 տ.

(ներառյալ).

6) Պատանեկություն 17—21 տար.

Դունդորինի սիսեման կազմված է կենսաբանական սկզբունքով, ըստ վորի աճման ժամանակաշրջանը բաժանում է յերեք գլխավոր շրջանների. —

1) Խիստ արագ աճման շրջան,

2) Զարգացման շրջան,

3) Կատարելագործման շրջան:

«Կենդանի եյակը», ասում է Գունդորինը, «ամենից առաջ ձգտում է հասնել վորոշ հասակաչափի, վորը պայմանավորում է նրա ինքնուրույն ֆունկցիաները և հետո արդեն շատ թե քիչ յերկար վարժությունների միջոցով, զարգացնում է առանձինապահմին ֆունկցիաներ և վերջապես բավականաչափ զարգանալով ու ամբապնիզելով, ձեռք և բերում բարձր ընդունակություն, այն եւ արտադրել իր նմանները:

Դրան համապատասխան ել Գունդորինը վորպես առաջին շրջան ընդունում է այն ժամանակամիջոցը, յերբ տեղի յի ունենում որդանիզմի ուժեղ աճումը մինչև չորս տարեկան հասակը, յերբ աճման եներգիան սկսում է նկատելի կերպով թուլանալ:

Յերեւորդ շրջանը, դա զարգացման պլրոցեսների գերակշռող շրջանն է, յերբ թուլանում և աճման եներգիան, այդ այն ժամանակաշրջանն է, յերբ զարգանում և համաձայնված փոխհարաբերության մեջ են մտնում առանձին գործարանների փունկցիաները։ Այդ շրջանը յերկարածվում է մինչև սեռական հասունությունը։

Վերջապես յերրորդ ժամանակաշրջանը դա որդանիվմի կատարելագործման կամ սեռական հասունության շրջանն է։

Բիոգենետիկ ըլլոգենետիկ սկզբունքի կողմնակիցները մանկան հասակի բաժանման վերաբեր սկզբունքը յուրահատուկ մոտեցում ունին։ Անհատը (օնտոգենեզիս) կրկնում է իր ցեղի

(Փիլոգենեզիս) բոլոր շրջանները։ Այսինքն՝ անհատի զարգացումը ներկայացնում է իրենից իր ցեղի զարգացման կրծառ կրկնությունը։

Այդ սկզբունքն առաջին անգամ հայտնաբերեց Գելկելը՝ սաղմնային զարգացման համար, վորը (սկզբունքը) յերեխայի վերաբերմամբ կիրառելիս հետեւյալ իմաստն ունի։ Մանկան որդանական զարգացումը մոր արգանդում կրկնում է զարգացման այն բոլոր աստիճանները, վորով անցել են մարդկային ցեղի անասնական շրջանի նախորդները։ Սաղմնային բջիջից սկսած մարդկային սաղմը սկզբում անցնում է անվորնաշարավորների զարգացման աստիճանները, ապա վորոնաշարավորներինը, իր նշաններով հիշեցնելով ձկներին, հետո ընդունում է յերկակենցաղների և վերջապես կաթնասուններից մինչև կապիկների կերպարանք։ Նորածինն ունենում է գեռ մէ քանի կապկային գծեր (կառչող ձեռներ, վոտների մատների գյուրաշարժություն, ճկունություն և այլն)։ Հետագայում փորձեցին բիոգենետիկ սկզբունքը կիրառել նաև մարդկային անհատի հոգեկան զարգացման վերաբերյալ և այդ նպատակով սկսեցին սովորեցնել թե յերեխան հետևողական կերպով կրկնում է մարդկային կուլտուր-պատմական զարգացման շրջանները։

Բիոգենետիկ սկզբունքի ավելի զարգացած ձեր ներկայացնում է Գիտչենսոնի սխեման, վոր մարդկության և յերեխայի զարգացման ընթացքները հարազում և հետեւյալ կերպով։

Մարդկության կյանքի ժամանակա- շրջանները՝ մամականի մամականի մամականի մամականի մամականի	Յերեխան հասակա- կանությունը	Տիեզր հասակա- կանությունը	Յուրաքանչյուր հասակա- կանությունը
1) Թափառական շրջան, (սունդի ձեռք բերելու միջոց- ները՝ հող փո- րելու ու քանդե- լը)	Մինչև 5 տարե- կան հասակը (մանավանդ 3 տարեկան հասա- կանը).	Ամեն ինչի գնա- հասությունները կապվում են ու- տեղու և ճաշակի հաճելի ու ան- հաճախ գոյացու- թյունների հետ։	Սրած զբաղ- մունքն են համ- ական ու կրծուելը։
2) Վորարդական շրջան,	4—12 տարեկան հասակը (մանա- վանդ 7 տարե- կան հասակը),	Վախ ստարների հանդեպ. ծածուկ փորձողություն- ներ, անտարբե- րություն ցալի հանդեպ. խոտա- պրոտություն։	Պահված տեղից վախեցնել, պահ- մոցիկ խաղալ, կրի խաղալ հարձակում։ կոփչելը։
3) Հողվական շրջան.	9—14 տարեկան հասակը (մանա- վանդ 10 տարեկան հա- սակը).	Քնքություն ցալի կենդանի- ները. սեփական մի բան ունենա- լու ցանկու- թյուն։	Ընտանի կենդա- նիների պահելն ու կերպելը. սնակներ կա- ռուցելը.
4) Հողագործա- կան շրջան.	12—16 տարեկան հասակը (մանա- վանդ 12 տար- եկան հասակը),	Այգեգործու- թյան տենչ, նա- խահառության զարգացում,	Այգեգործու- թյուն. ցանքուր քանդելը, վոր- պակու տեսնեն, թե ինչ ե բու- նում. յեղանակի նշաններին հե- տեւելը և դիտելը։
5) Առևտրի շրջան.	14—20 տարեկան հասակը (մանա- վանդ 18—20 տ. հասակը).	Փողային հետա- քրքրության յե- րևան գալը.	Փոխանակու- թյուն. ծախելու գործողությու- նը.

Մարդկության պատմության և յերեխայի հոգեկան վիճակի զարգացման միջև խիստ և ճիշտ զուգահեռ ընդունեն անկարելի յեւ։ Սրա հետ ստիպված են համաձայնվել նույն խոկ իրենք՝ բիոգենետիկ սկզբունքի կողմնակիցները։ Նրանք խոսում են ողակների կրծառման մասին, այսինքն ոնտողենեսիզ ֆիլոգինիզմախն

ճշտությամբ կրկնելու նահանջի մասին: Մանկութիւն իր անհատական զարգացման ընթացքում չի կրկնում առանձին շրջաններ, վորով անցել են իր նախորդները: Բացի այդ զանցառութեարից, նրանք կարեոր են համարում խոսել նույնիսկ նաև փիլոդենետիկ կարգի փոփոխության մասին, շրջանների տեղափոխության մասին և նույնիսկ ավելի ուշ կասարվող ներգրումների մասին:

Դրա հետ միասին, առանձին յերեխայի և մարդկության զարգացման ընթացքի մեջ նրանց ընդգծած զուգահեռականը մեծ մասամբ մակերեսային ե, արհեստական և բոնազրոսիկ անալոգիա: Այդպիսով պարալելից մեջ այդ յերկու դրությունների մեջ զիտական որենք չե, վորի հիման վրա կարելի լիներ մանկավարժական հետեւթյուններ հանել: Յեթե այդպես լինի, ուրեմն պետք պիտի լինի մանկավարժության և դաստիարակության գործում յերեխային արհեստականորեն կտրել նրան շրջապատող ժամանակակից կյանքից:


Զարգացման ուսումնասիրելու համար մանկարանությունաղեղը (կրիայ) նը ամենից առաջ պետք ե վերականգնի, թե ի՞նչպիսի քանակական փոփոխություններ են համապատասխանում հասակի, քաշի և ուրիշ ֆիզիքական հատկությունների, նաև մտավոր զարգացման, վարք ու բարքի մեջ՝ մանկական մասսայի տարբեր հասակներին: Մանկան տարիքի և նրա պսիխոֆիզաքական հատկությունների մեջ յեղած կախումն ավելի ակնբախ կերպով արտահայտվում է և ավելի պարզ կերպով և դրակիորում իր եյական գծերն ու առանձնահատկություններն այն գեպքում, յերբ նա պատկերացվում է գրաֆիկ կերպով (գրաֆիկներ կազմելու համար սովորաբար ոգտվում են Դեկարտի ուղղանկյուն կոորդինատի մեթոդով):

Ուղղանկյուն կոորդինատներ կոչվում են յերկու ուղիղ, փոխարձաբար ուղղահայաց գծերը: Մեկը նրանցից՝ հորիզոնականը, կոչվում է արացիս (աճցած), մյուսը՝ ուղղահայացը՝ որդինատ: Այդ յերկու առանցքների հատման կետը 0, կոչվում է կոորդինատների սկիզբը:


Հորիզոնական գծի վրա, 0 կետից աջ չափում ենք այն կըտորները, վորոնք նշանակում են յերեխայի հասակը (տարիքը ամիսները և որերը): Մտացված կետերից գեղի վեր կանգնեցնում ենք ուղղահայաց գծեր, վորոնց բարձրությունը ցույց է տալիս տվյալ տարիքին համապատասխանող հասակի մեծությունը, քաշը: Այդ ուղղահայացների ծալրերը միացնելով մենք ստանում ենք կտրտված կամ թեր դիմ, վորը ցույց է տալիս տարիքի

ու հասակի կամ տարիքի ու քաշի մեջ յեղած համեմատությունը:

Սնումնեա:



Նկ. 4. Հասակի դիմամեկնեա: — տղայի, - - - աղջկա



Նկ. 5. Կշռի ավելացման դիմամեկնեա: — տղայի, - - - աղջկա.

Զարգացման ընթացքն իրենից չի ներ-
հարգացման ալի- կայացնում մի հավասարաշափ անընդհատ
ժամանակ ընթացքը. բարձրացող թերություն: Նա ձգվում է ա-
լիքածե, յնթարկվելով վորոշ սիթմի և
առաջ և բերում մի շարք թոփչքներ: Արագ աճման շրջանին նա-
խորդում ե դանդաղ աճումը և զադարը (Յաշոյ):

Զարգացման առանձնակի խիստ արագ տեմպին, վոր տեղի
յե ունենում մանկության վաղաժամ շրջանում, հաջորդում է ա-
տամները փոխելուն նախորդող դադարը. դրան հետեւում է նոր
վերելք, ապա դարձյալ դադար. հասունության, վերահաս շրջա-
նում դարձյալ վերելք: Տղաների և աղջիկների զարգացման այդ
վերջին ալիքը իրար չեն համապատասխանում լիովին, վորովհե-
տև սեռական հասունության մեջ աղջիկները կանխում են աղա-
ներին:

Նման ալիքածե պատկեր և ներկայացնում առանձին որ-
գանների, ինչպես և փողիքական ու հոգեկան առանձին փունկ-
ցիանների և ընդունակությունների՝ զարգացումը: Յուրաքանչյուր
գործարան և փունկցիա ունի իր զարգացման աղեղը: Ուրեմն
գործարանները և փունկցիանները միաժամանակ չեն աճում ու
զարգանում: բայց գոյություն ունի վորոշ հաջորդականություն և
նրանց զարգացման ընթացքում վորոշ որենք:

Այն ժամանակ, յերբ մարմի վորոշ մասերը գտնվում են
զարգացման արագ և ուժեղ թափի մեջ, մյուս մասերն անցնում
են համեմատական դադարին: Յուրաքանչյուր գործողություն
(որինակ խոսելը, վաղելը) ունի արագ զարգացման «իր ժամա-
նակը». վորոշ ժամանակամիջոցում զարգացումը կենտրոնանում
է մի քանի փունկցիանների շուրջը, ապա անցնում և մյուսներին:

Մարմնի տարբեր մասերի, տարբեր ժամանակներում վոչ
միատեսակ աճելու հետեւանքով, անընդհատ փոխվում են նրանց
մեջ յեղող համեմատական փոխարարերությունները և մանկա-
կան հասակի յուրաքանչյուր փունկ ունենում է իր հատուկ ար-
տաքին տեսքը (օնլուկ): Այդպես ել ինկատի ունենալով, վոր զա-
նազան փունկցիաններ մերթ առաջ են ընկնում և դառնում զար-
գացման կենտրոն և մերթ նահանջում՝ մյուս փունկցիաններին
զարգանալու հնարավորություն տալու համար, մանկական հասա-
կի յուրաքանչյուր փուլ զերակշող գործունեցության, հետաքըր-
քությունների և զարգելակերպի վերաբերմամբ ներկայացնում
է մի նոր պատկեր, ուստի և պահանջվում է մանկավարժական
առանձին մոտեցում: Յուրաքանչյուր գործարան և յուրաքան-

չյուր ֆունկցիա, աճման ու զարգացման ընթացքում, հետեւում ե
իրեն առանձնատուկ որենքին:

Այն ժամանակ, յերբ մարմի ընդհանուր յերկարությունն
աճման ժամանակաշրջանում ավելանում է յերեք անգամ, վոտ-
ների յել կարությունն ավելանում է հինգ անգամ, կրծքի վան-
դակի ծավալագիծը մեծանում է 2,7 անգամ, գլխի շրջագիծը՝ 1,7
անգամ: Այն ժամանակ, յերբ մարմի ընդհանուր քաշը զարգաց-
ման ամբողջ ընթացքում մեծանում է 20 անգամ, գլխի ուղեղի
քաշն ավելանում է 4 անգամ, սիրտը՝ 13 անգամ և այլն: Բացի
վրանից, ինչպես վերն ասված ե, աչքերը՝ ձեռները, ձայնը և կուրծ-
քը, ընդհանրապես յուրաքանչյուր գործարան և յուրաքանչյուր
ֆունկցիա ունի իր ժամանակաշրջանը, յերբ նա աճում է ու զար-
գանում ավելի, քան մի ուրիշ ժամանակ: Գործարանների աճու-
մը (այսինքն նրանց չափի և զանդվածի մեծանալը) զուգընթաց
չի նրանց զարգացման (այսինքն նրանց կազմակերպման, գործ-
առնության կատարելագործման) հետ: Որինակ՝ գլխի ուղեղի քա-
շը իր հասակին առնում է 7 տարեկանում, այսինքն հավասար-
վում է հասակավորի ուղեղի քաշին, բայց նրա մանրադիտակա-
յին կազմությունը և նրա գործառնությունը պահանջում են դեռ
զարգացման յերկար ժամանակամիջոց:

Գործարաններն իրանց աճման ընթացքում յենթակա յեն
գագարի՝ իրենց ներքին կազմակերպման ու ֆունկցիաների կա-
տարելագործման համար:

Դաշտարի և յերեմին ել զեպի յետ թվացող շարժման շրջան-
ներն անխուսափելի յեն հառաջադիմող յուրաքանչյուր քայլի
համար: Այդ պատճառով դաստիարակիչը չպետք է առանձին
նշանակություն վերաբերի յերեխայի տառագիմության ժամանա-
կավոր անխուսափելի կասեցմանը, վորովհետև այդպիսի դադար-
ներին հաջորդում է առաջադիմության նշանակալից վերելք: Վոր-
ես գործարանի հասունանալուց առաջ գոյությունն ունեցող ներ-
քին վերակառուցման շրջանը, միենույն ժամանակ հանդիսանում
է այն ժամանակամիջոցը, յերբ այդ գործարանը շատ հետու-
թյամբ հոգնում է, ուրեմն և զգույշ վերաբերմունք է պահանջում:
այդ իսկ պատճառով չպետք է աշխատել արհեստականորեն արա-
գացնել զարգացումը և հաջողությունը գարձնել հարկադրական,
վոր հետագայում կարող է ունենալ զաման վախճան:

Սաման եներգիայի ամենամեծ ուժը յերևան և գալիս որգա-
նիզմի կյանքի սկզբանական շրջանում, վորից հետո աճման թափը
թուլանում է Որգանիզմի առանձնապես արագ և աճում արգան-
դային շրջանում: 9 ամավա ընթացքում (միաբնիջ դրությունից

մինչև ծնվելը) որդանիզմի յերկարությունը՝ մեծանում է 2,500 անգամ (0,2 միլիմետրից—50 սանտիմետր). իսկ քաշը՝ միլիմետր անգամ (0,000003 գրմ.—3 կիլոգրամ.)

Արտարգանդային կյանքում ել՝ գոյության առաջին տարին աչքի յեն ընկնում իրենց աճման և զարգացման բարդավաճությամբ: Ինչպես ասում է Ժ. Ռիստելը, ծծկեր յերեխայից մինչև խոսող մասում լը յեղող զարգացման պրոցեսիվ տարածությունն ավելի նշանակալից ե, քան այն տարածությունը, վորը դպրոցականին բաժանում է Նյուտոնից:

Լ. Տոլստոյը կյանքի առաջին տարիների մասին ասում է՝ «Միթե այն ժամանակ չեմ ձեռք բերել ան բոլորը, ինչով վոր հիմա ապրում եմ և ձեռք եյի բերում այնպես արագ և այնքան շուտ, վոր ամբողջ հետաքա կյանքում յես նրա $\frac{1}{100}$ մասն անգամ ձեռք չեմ բերել: 5 տարեկան յերեխայից մինչև ինքս մի քայլ և միայն, նորածին վիճակից մինչև 5 տարեկանը՝ սարսափելի տարածություն, սաղմից մինչև նորածինը՝ անգունդ»:

Հ Ա Բ Յ Ե Բ

1) Մարդու կյանքը քանի շրջանի կարելի յե բաժանել և վերքան մեծ և աճման շրջանի տեսողությունը, վորը մանկաբանությունն ուսումնակրում է:

2) Ինչու ավելի ճիշտ ե, յերբ ասում ենք մանկաբանությունը գիտություն և մանկան և պատանու մասին.

3) Շտրատցին, Լանգշտեյնը, Շտերնը, Շտումպֆը, Պինկելիչը ինչ նշաններ են դնում աճման ժամանակաշրջանների բաժանման հիմքում:

4) Ի՞նչ բովանդակություն ունի Գունդորինի բիոլոգիական սիեման՝ յերեխայի աճման մասին:

5) Ինչումն ե կայանում բիոգենետիկ սկզբունքը և նրա կիրառումը մանկավարժության մեջ ի՞նչ հետևանքների յե հանդում:

6) Զուգագիտում են արդյոք առանձին գործարանների և ֆունկցիաների զարգացման ոիթմերը:

7) Միենույն բանն ե, յեթե ասենք աճում կամ զարգացում. նրանք զուգընթաց են արդյոք:

8) Ի՞նչ նշանակություն ունին զարգացման ընթացքում թվացող գաղարների շրջանում ^{ԱՄՊՐԵՆԻ ԿԱՐԱԿԱՆ} գումարությունը:

ԱՏ ԼՐ 1178

0025396

2013



